ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 214-Ա

«24» դեկտեմբերի 2019 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 187-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ԱՄԱՍԻԱ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0,081781 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐՈՒԺԱՆ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ 6 ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մաին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի , «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 89-Ա որոշումը.

Որոշում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի /բնակավայր Ամասիա/ սեփականությունը հանդիսացող բնակելի տունը նվիրատվության կարգով քաղաքացի Վարուժան Գրիգորի Գրիգորյանի 6 անձից բաղկացած ընտանիքին օտարելու մասին» թիվ 187-Ա որոշումը:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականություն հանդիսացող, գյուղ Ամասիա, փողոց 2, փակուղի 4, թիվ 72 հասցեում գտնվող 158,77 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը /հետագայում՝ անշարժ գույք, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 23102019-08-0015/ և նրա պահպանման և սպասարկման համար նախատեսված բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-010-0023-0017 կադաստրային ծածկագրով 0,081781 հեկտար

մակերեսով հողամասը նվիրատվության կարգով, անհատույց, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով օտարել այդ բնակելի տան վարձակալ Վարուժան Գրիգորի Գրիգորյանի 6 անձից բաղկացած ընտանիքին /հետագայում՝ Նվիրառու/:

3. Անշարժ գույքի նկատմամբ համասեփականատեր ճանաչել՝
   Վարուժան Գրիգորի Գրիգորյանին,
   կնոջը՝ Սվետլանա Անդրանիկ Հովսեփյանին,
   որդուն՝ Գոռ Վարուժանի Գրիգորյանին,
   հարսին՝ Գոհար Մելիքի Պողոսյանին,
   թոռին՝ Արեն Գոռի Գրիգորյանին,
   թոռին՝ Ինգա Գոռի Գրիգորյանին:
4. Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:
5. Անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերի կատարումը վերապահել Նվիրառուին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«24» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Ամասիա